Վահան Տերյան

Սիրում եմ աչքերիդ տխրությունը խորին

Սիրում եմ աչքերիդ տխրությունը խորին,
Անաղմուկ խոսքերիդ դաշնակները հիվանդ,
Կուսական ամոթխած փայփայանքդ, որ իմ
Սև օրերն է օրրում խնդությամբ հնազանդ:

Խոսքերըդ կարկաչող, որպես նուրբ մի զգեստ,
Ստվերում են սրտիդ գաղտնիքները սիրուն,
Քո հոգին չի սիրում մերկություն անհամեստ,
Դու այնպես ես սիրում, կարծես թե չես սիրում:

Հեռավոր երկրի պես հմայող է հոգիդ,
Անուշ են խոսքերըդ, ժըպիտներդ աղջկա,
Մանկական անպաճույճ երգի պես միամիտ,
Դյութական, որպես այն, որ չըկա, որ չըկա...